

ՀԱՅԿԱԿԱՆԻՔ*



Որբենացու խրթին սասացուածներից մէկն է մնացել մինչև այսօր «զարտախուրի» հաստածը: Եթէ այստեղ համառօտակի կամենայինք ամփոփել բոլոր այն բացատրութիւնները կամ լաւ ևս բացատրութեան փորձերը, որ մինչև օրս եղել են, կստացուեր մի աշազին մենապութիւն (մոնոգրաֆիա): Անթերցողը կարող է իւր հետաքրքրութեանը բաւականութիւն տալ եթէ կամենում է այս հարզի պատմութեանը ծանօթանալ զիմելով փակագրծեալ աղբիւրներին: [Հայկ. բառ. «արտախոյր»: «խաւարտ», «ափց», «խաւարծի» բառերը. բոլորն էլ մեկնուած ինչպէս բայս: Հ. Ստեփանի աշխարհաբար Խորենացու 156 մեծ ծանօթութիւնը, որտեղ առաջ են բերուած իմինի, Ֆլորիւալի, Միհիթարեանների, Ռւիստոն եղբայրների, Լանգլուայի, Լառերի, Ք. Պատկանեանի, Լագարդի, Գ. Խալաթեանի և այլն կարծիքները: Ք. Պատկանեանի Մատ. ձև Արքուն. շլու. Ա. Եր. 44. Իմինի Բ. թարգմանութեան 101 ծանօթութիւնը (նոյնը և առաջին թարգմանութեան մէջ): Պ. Գր. Խալաթեան իւր այս հատուածի բացառութիւնը կրկնեց և նորերս. Zur Erklärung der Armenischen Geschichte des Moses von Choren, von Gr. Chalathiantz, Wien Zeitch, f. Kund. d. Morgenl. 1893, I. Արանց վրայ պէտք է աւելացնել և պ. Եփ. Դաւթեանի «Արձագանքում» (Հմբ. 2) հրատարակածը, որն և յետոյ (1891, օգոստ.) առանձին նամակով ուղարկելու ինձ, Խնդրելով յիշել իւր բացատրութիւնը իմ «Ուսումնասիրութեանց» մէջ: «Տեսայր Ամթենիկ» հատուածը մանրամասն տարրալուծուելուց յետոյ թարգմանում է, այսպէս. «Ամթենիկ տիկինը սաստիկ ցանկանում էր բանել կամ փայփայել Արգամայ սամբազատ (սամուրով պատաճ) խոյրը».

*. Տես նախընթաց համար:

և նրա թաւշեայ բարձերի փունջը: Պարոնի բացատրութիւնները չափազանց կամայական են և ինձ թւում է թէ բոլորովին անհիմ: Պ. Արք. Պալեան «ի բարձիցն» հասկանում է «բարձունք = բլուներ» որոնց վրայ պիտի բուսնեին յիշուած բոյսերը (անտիպ աշխատութիւն): Կլինին անշուշտ և ուրիշ բացատրութիւնները որոնց ես չեմ հանդիպել կամ մոռացել եմ:]

Բոլոր բացատրութեանց մէջ մի բան միայն հաստատ է, որ Խորենացու այդ հատուածը «Եղանական» երգ է, և այդ էլ զիտենք, որովհետեւ ինքը պատամահայրը մի ուրիշ տեղ այդ մեղ ասում է. «Արտաշիսի վերջնոյ գործք՝ բարզում ինչ յայտնի են քեզ ի վիպասանացն, որ պատմին ի Գողթան: Ճինել զքաղաքն, և խրնամութիւն ընդ Ալմանք և ծնունդք զարմիցն, և իբր ուրիշնաւ Ամթենիկան ընդ վիշապազունացն՝ առասպելաբար...» (Բ. Խմթ.):

Եղած բացատրութիւնները շատ կամ սակաւ չափով ինձ արգելու վաղուց չեին բաւականացնում: Բայց առաջ քան թէ իմ բացատրութիւնս կառաջարկեմ: անհրաժեշտ է այդ հատուածի բնագիրը վերականգնել, մանաւանդ որ այս ուսումնասիրութեամբ սկիզբը դրած կլինինք Խորենացու ձեռագրերի ուսումնական ամենակարեւոր գործին:

Վերջապէս յաջողուեց ինձ ձեռքի տակ ունենալ մեր մասենագրանի Խորենացու բոլոր ձեռագրերը: Այժմ իմ ձեռքումն եղած այդ բոլոր ձեռագրերը (թուով 17) այս հատուածի վերաբերութեամբ բաժանումնեն երկու մեծ դասի: Ամինջի՞ւ դասը (11 հատ) ներկայացնում է հետեւեալ բնագիրը իւր անընդեր ընթերցուածներով:

«Այլ՝ և տեսայր ասեն՝ Ամթենիկ տիկին՝ տեսանան՝ զարտախուր՝ խալաթար⁹ և ¹⁰ զաից¹¹ խաւարծի¹² ի բարձիցն¹³ Արդաւանաց¹⁴»:

Այժմ տանք ընթերցուածները: Պակագծի մէջ զբուած թուերը ձեռագրերի այժմեան թուահամարներն են:

(Այս դասի ձեռագրերն են № 249, 1661, № 248, 1663, 1668, № 611, 615, 1662, 1664, 1666, 1667):

¹⁾ Այլ (249), ²⁾ — ³⁾ տենչա (611, 1666), ⁴⁾ — ⁵⁾ Ամթենիկ (1664), Ամթինիկ (249, 1661, 248, 1668, 1663), ⁶⁾ տիկինն (1666), ⁷⁾ տենջանս (1661), ⁸⁾ զարտ ախուր (1662), ⁹⁾ խաւարտն (249, 1661), ¹⁰⁾ հաւարծի (249, 1661), ¹¹⁾ Արգաւանա (1666):

Երկրը դասը (6 ձեռագրի) ունի շետեւալ բնագիրը իւր ընթերցուածներով,

• Այլ ¹⁾ և ²⁾ տենչա ³⁾ — ⁴⁾ սաթենիկ ⁵⁾ — ⁶⁾ տենչանս ⁷⁾ զարտախուր ⁸⁾ հաւասար ⁸¹⁾ խաւարտ ⁹⁾ և ¹⁰⁾ զարից ¹¹⁾ հաւարծի ¹²⁾ ի բարձիցն ¹³⁾ Արգաւանայ ¹⁴⁾:

Այս դասի ձեռագրերը կրում են հետևեալ թուահամարները № 616, 1665, 1669, 1671, 1672, 1686: Տարբեր ընթերցուած ունին.

²⁾ չիք (616, 1665), ³⁾ տենչա (1665), ¹⁴⁾ արգաւանա (1665):

Թեթև ակնարկն անդամ բաւականէ Ա և Բ դասերի մեջ տարբերութիւնը նկատելու համար:

Բ դասը չունի առնեն, առնեն բառերը, և որ առելի նշանաւոր է, ունի մի առելորդ բառ՝ հաւասար: Այս վերջինն է ամենաբնորոշ կետը: Բ դասի տարբեր ընթերցուածները չնշին են և անդիք չեն տալիս որ և է ստորաբաժանման: Տենչա, առնեն բնագրուածները, որ իրենց նմանն ունին և Ա դասի մէջ, թու ուղղագրական ձեւեր են (բաց է թողուած չնշուող շատուր բառ սովորութեան նախնի այն մեջ դպրոցի ուղղագրութեանը, որ զեղջում է բոլոր չնշուող յ տառերը): Այդ ուղղագրական դպրոցի մասին մենք տուիժ կունենանք ի մօտոյ երկար խօսելու):

Ա դասը իւր տարբեր ընթերցուածներով երկք որոշ ստորաբաժանում ունի, որոնցից առաջինը (Ա ա) 2 ձեռագիր (№ 249 և 1661), երկրորդը (Ա բ) 3 ձեռագիր (№ 248, 1663, 1668) և երրորդը (Ա գ) 6 ձեռագիր (№ 611, 615, 1662, 1664, 1666, 1667): Բայց այս խմբերի մասին ուրիշ անդամ:

Բ դասին է պատկանում կարինեանցի համեմատած էլեկտր օրինակը առանց որ և է նոյն իսկ մանր տարբերութեան (տես Բաղդատութիւն կարինեանցի 1853, եր. 50 բ. սիւ-

նակ): Բ դասին է պատկանում և Խորենացու Առաջին ապագրութիւնը 1695 թուին «Յամատէլօգամի»: Կաև 1752-ի ապագիրը, արտարպութիւն առաջինի: Ա դասին են պատկանում՝ կարինեանցի առաջնակը և Վենեակեան 1843-ի ապագրութեան բոլոր վեց օրինակները, եթէ միայն բոլոր ընթերցուածներն էն նշանակուած (որ հաղիւթիւ, և այն առանց որոշելու թէ որ ընթերցուածը որ ձեռագրից է): Ա դասին է պատկանում՝ նաև իմ և պ. Մատի բաղդատած ձեռագիրը (անս Իզъ ձեռու ունեցած առաջնակը և առաջնակը առաջնակը, որ Ա դասը նշանաւոր և անհրաժեշտ ստորաբաժանութեան իմբեր) ունի:

Այժմա զանք մեր բացատրութեանը:

Ժ-դ դարի զրող Արամը—մի բոլորովին նոր անուն մեր շին դպրութեան մէջ—Խորով Անձեւացու վարժապետը, իւր մի զրուածքում (տես այս աշխատութեան § Զ և § Ո) բերելով բարեկանած հասցէ օրինակը ի միջի այլոց առումէ: ... զի թէ ոգին ոչ իցէ երկրսպադու ախտից մարմնոյն թէպէտ և կապեալ ի տըկարութեանէ զտանի առ բոնութիւն բանսարկուին և ոչ կարէ շիջուցանել զհուրն ցանկութեան այլ միայն աղաղակէ առ տէր՝ ոչինչ վնասի յախտից մարմնոյն, զի տէր ձեռնկալու է նորա: զի մերկանդամ ոչ է արկեալ ի հուրըն, այլ ոլուքն-ճռն հաւատոյն ընդ իւր է, և կարուք ապաշխարութեան զառականս մեղացն ծածկեալէ, և ԶԲԱՐՁԱՌ սրբութեանն ԱԲՏԱԽՈՒԹԵԱԿԵԱԼ: Դմա ոչ կարէ հուրն դամագիւտ լինել և այլն:

Ահա մի զեղեցիկ վկայութիւն, որի մէջ հանդիպութենք միասին Խորենացու երկու բառին բարձ և արտախուրին: Վարտիքով առականքներն են ծածկւում: Խոկ արտախուրով կամ արտախուրակով՝ բարձերը արտախուրակուում:

* Արբութիւնը, ասումէ Արամը, արտախուրակումէ բարձերը, ինչպէս որ ապաշխարու-

թիւնը որպէս վարափիք սուականքներն է, ծած-
կում:

Արամի այս ասացուածը ինչպէս տեսանք,
Հայոցի պատմութեան նմանու-
թեամբ է յօրինուած: Եւ, յիրաւի ևրից ման-
կանց համար ասուած է, Ա. Գրքում: «Յայն-
ժամ արքն այնոքիկ կապեցան պատճառ առա-
և գործեած: արդ իսուած և դանիապատճ իւ-
րեանց, և ընկեցան ի մէջ հնոցի հրոյն բար-
րոքելոյ: Պանիկէլ. դ. 21:

Այս օրինակում՝ արդառինունք զրուած է
վարափիքի և զանկապանների միջեւ և ակների
է, որ բարձերի արտախուրակ է և ոչ թէ
զիսի: Յունարէնի համեմատութիւնը սխալ
հասկացողութեան գոտնառ է, դարձել (tiara=
խոյր, զիսի կամ թազի արտախուրակ): Յայտ-
նի է որ մեր Աստուածաշունչի թարգմանու-
թիւնը շատ կէտերում տարբերումէ Եօ-
թանանից թարգմանութիւնից և մերձենում
է ասորափաննին կամ երրայական բնապրին:
(Այս մասին աեւ նաև Պոլսի նոր հրատա-
րակութեան (1892) յառաջարանը):

Ա. Գրոց մասնագէտներին, մասնաւորապէս
երրայագէտներին, թողնելով այս հետաքըր-
րական կէտի մանրամասն համեմատութիւնը,
դնենք այստեղ եք ասունքուն բնապրից հայ աշ-
խարհիկ թարգմանութիւնը. «Ան ատենը աս-
մարդիկը իրենց անդրանիւն ունի մասնաւու-
թիւնը. Երբարձրութիւնը ու (ամէն) հանդերջներուն
կապեցին ու բորբոքած կրակի հնոցին մէջը
նետեցին» (Ա. Պոլիս, 1884): Ինչպէս տես-
նումնենք երրայական բնապրում, ինչպէս և
հայ հին թարգմանութեան մէջ ըստ Արամի
հասկացողութեան, չկայ զիսիարկի, զիսի ար-
տախոյրի կամ արտախուրակի հետքն ան-
դամ: Այսպէս է նաև բոլոր այն թարգմանու-
թեանց մէջ, որոնք երրայական բնապրի հե-
տեւութեամբ են: (Օրին. „Et aussitôt ils fu-
rent enchainés, et, avec leurs habits et leurs
chaussures, et tous leurs vêtements, jetés au
milieu de la fournaise du feu“ Paris, 1846).

Արամի նման են հասկանում և մեր հին մեկ-
նիները. «Կապեցան վարափօք և բարձիցն հան-

ութիւններ» (Ա. արգան, Արեկն. Պանիկէլ. տես-
չյիկ. բա.):

Այսպիսով ուրիշն՝ արախուրակ կամ ար-
տախուրակ նշանակումէ. 1. ընդհանրապէս
ծածկոյթ, ծածկոյթ խորանին տես Ելից 1.9,
19, Ե, 17, Թուոց. Գ. 26: 2. զիսիարկի կամ
թազի արտախուրակ. (Ազաթ. Հյկ. բա.): Ինչպէս
են և ցայսօր պահուած եկեղեցական զգես-
տաւորութեան մէջ եպիսկոպոսական թազի
արտախուրակները, որոնք թազի ետևի եղրից
կախուերով անցնումեն վակասի տակով և
հանդում շուրջառի թիկունքի վրայ: Հնումը
գործածուող՝ իշխանների և թագաւորների
զիսիարկի արտախուրակ պատկերը, իմ կարձի-
քով, պահուած է, մեր «փղոսկրեայ տւետա-
րանում», տես նաև Վիեննայի հրատարակ.
«մոգերի երկրպագութիւն» պատկերը, Das
Etschmiadzin—Evangeliar, von D-r Josef Strzy-
gowski, 1891, եր. 23), կամ նման պատկեր-
ներ և մեր միւս ձեռազգերում: 3. բարձերի
արտախուրակ, ինչպէս տեսանք վերեւում ա-
ռաջ բերուած օրինակներում և ինչպէս զեռ
պիտի տեսնենք ներքեւում: 4. իրրե մողորակի
անուն (լուսնթագ, երկար): Զքը, կաթ.
և Զարդ առան.. Հյկ. բա.:

Խակ իրրե բոյսի անուն, կամ «բանջար
վարսաւոր» և ոչ մի վկայութիւն ունինք,
բայց Խորենացու այս թիւր ըմբանուած հտ-
տուածից:

Խճ յաջողուեց ուրեկի բարձերի արտա-
խուրակի վկայութիւն գտնել և Արեկոսի մէջ,
որը անշուշտ մինչեւ այժմն հասկացւումէր
իրեկ զիսի արտախուրակ (Պատկանեան —
թարգմանումէ շամա): Ասսանեան Խոսրով
(անշուշտ Բ-ը, 590 թուին զահակալած) մէծ
փառքի և պատիւների է արժանացնում Արմ-
եան Բաղրամանուն (Գուրգան կամ Արկան
մարզպան), տաղով հետզետէ աւելի և աւե-
լի բարձր պարզեներ: Առաջ բերձնք Արեկոսի
հատուածները փառը ինչ ընդպարձակօրէն.

— «Եւ եղեւ ի ժամանակին յայնիկ հա-
ճոյանալ Ամբատայ Բաղրամանուոյ յաշա Խոս-
րվու արքային. այս նմա զմարզպանութիւն

« Երկրին Արկանայ, առնել զնա իշխան և ի
 « վերաց ամենայն կողմանն այնորիկ. նուր զնա
 « ոսկւով և արծաթով զարդարէ ի հանգեր-
 « ձրս պատուականս և երեւելիս: Տայ նմա զիա-
 « մարն և զոււերն լեալ հօր իւրոյ Արմղղի.
 « գումարէ ի ձեռս նորա զաւրս պարսիկս և
 « դհյաստանեայս: Հրամայէ զնալ յերկիր
 « իշխանութեանն իւրոյ» (Գլ. Ծիր եր. 59):

— « Յայնժամ առաքէ առ. նա թագաւորն
 « հրտվարտակ մեծապէս զոհութեամբ, պա-
 « տուով մեծացուցանէ՝ ի վեր քան զամենայն
 « մարզպանս իւրոյ տէրութեան առնելով, և
 « զամենայն անսւեթս մատուակացն առաքէ
 « նմա ոսկի և հանգերձս թագաւորականս՝
 « առաջանաւուածու ոսկէշատցու և զանդադանուածու առ-
 « կամրք և մարզարտովք կարգեալ»: (Ծիր,
 եր. 63):

— « Յայնժամ տայ նմա սրբայ զտանու-
 « տէրութիւնն, որ անուանեալ կոչեր Խոսրով
 « Շում (Շնումն). զարդարէ ի չքնարս ի չոտու
 « և ի պատմուձանս թէշեղեայս յոսկւոյ աւ-
 « ծեալ. մեծացուցանէ ահազին պատուաւք ի
 « ճամբար ականակապ և ի զումարտակ և ի
 « զահս արծաթիս. արձակու (sic) ի նա զիա-
 « ճառն փոքր՝ զդիւան աշխարհին: Տայ նմա
 « զիողն չորեքձայնեանս և պահապանս զը-
 « րանն նորա ի հետեւակաց արքունի, զումա-
 « րէ նմա զաւր մեծաւ աշեղութեամբ յարեւելս
 « յերկիրն Քուշանաց, և հրամայէ նմա առ-
 « նել մարզպան՝ զօր ինքն կամեսցի» (Ծիր,
 եր. 65):

Այս վկայութիւններից պարզ երեւումէ որ
 արտախուրակները և զտակը բոլորովին տար-
 բեր բաներ են և արւումեն պարզե զանա-
 զան ժամանակ, միմեանցից ջոկչուկ: Այլեւ ար-
 տախուրակը յիշւումէ զանկապանի հետ որ
 այլ ևս փարասումէ որ և է կասկած: Ան-
 շուշան այս տեղումէլ բարձերի արտախու-
 րակներ են:

Այժման մեզ համար հասկանալի է թէ ինչ
 ակնարկութիւն է: — « Տեսայ Սամենիկ տեն-
 չանս՝ զարտախուր ・・・ ի բարձիցն Արդաւա-
 նայ»:

Ման բամբառակ երգեր, որոնց նիւթն եր
 անդրավարտիքը ոչ միայն այժմս մեր ժողո-
 վրդական բանաստեղծութեանց մէջ կան, այլ
 և այդպիսիներ յայտնի են միջնադարեան եւ-
 րոպական ազգերի մէջ: Վարտիքի «փողը» կամ
 «փողքը» որի միջով անցնում է «փողկապը»
 (ուշնուրը), եր (և է այժմս ժողովրդի մէջ) մի
 զրապան, որտեղ պահւումէին մանր մունր բա-
 ներ, ընծաներ կանանց համար, միրգ և այլն:

Իրանդի նշանաւոր զիւցազներգութեան մէջ
 երբ Բուամիմունդ թագուհին Գան կօմսին ըն-
 ծաներ է տալիս կոմսուհու համար՝ կօմսը
 այդ ընծաները (ոսկի, յակինթ և այլն) զնում
 է իւր վարտոց մէջ. il les ad prises, en sa
 hoes e les bute” (La Chanson de Roland, chant I). Ճանօթութիւնն աւելացնում է: On ser-
 rooit dans ses chausses (heuse, houseaux) les
 menus objets, d'ici que l'objet soit muni de :
 Մասնաւորապէս ասպետների սիրելի սովորու-
 թիւնն էր այդ «փողի» մէջ նարինջ պահել
 իրենց պաշտած տիկիններին ընծայելու հա-
 մար: «Փողկապի» հանդցց ընկնելը, որ մեր
 նախապաշտմանց համեմատ զրկում է մար-
 դուն առնական զօրութիւնից, նոյնպէս կայ և
 արևմտեան ազգերի մէջ (agnillette nouée):
 Տես տեղեկ. ֆրանսական braguettes կամ bra-
 yette և Haut-de-chaises զգեստների մա-
 սին, նաև բազմաթիւ բամբառակ երգեր և
 ակնարկներ ճիշտ խորենացու հատուածի մըտ-
 քով Rabelais: Gargantua, chapitre VIII, chap.
 XXXV, XI, Pantagruel, chap. V. livre II,
 chap. XVIII livre III, chap. VII և այլն:

Այսպիսով կարծեմ վերջնականապէս որոշ-
 ումէ «արտախուր» և «բարձ» բառերի նշա-
 նակութիւնը: Գանք միւս բառերին:

« և զտից»-ը մեր ձեռագրերի մէջ ոչ մի
 տարբեր ընթերցուած չունի, միայն պէտքէ
 նկատել, որ միշտ զրւումէ «և» և ոչ «եւ», և
 շատ անդամ բոլորովին կազմ յաջորդ բառին՝
 «եզտից»: (Ուեր ձեռագրերը 16-դ և մեծ մա-
 սամբ 17-դ դարի զբուածքներ են, վենետիկ-
 ցիներինը և ուրիշ տեղ զանուած ինձ ծա-
 նօթ ձեռագրերը նոյնպէս հսագյնն է հա-

մարտում վենետիկի Զօֆ — 1303 թուինը, բայց դրա էլ մասն ընթերցուածները ծահօթ չեն: Շատ աւելի հնագոյն ձեռադիր է յիշում Վրտանձտեան (Թորոս Աղքար, Արդինի բարձրահայեաց և, Աստուածածնի վանքի մատենադր: № 211 Մով: Խորենացի, Ատ. Տարօնեցի, Արիս. լսասիվերտցի, Եւսեբի պատմութիւն եկեղեց, տան գպրութիւնք), «զրեալ ի դոմոց վանք, ի թվին Մ. ծր. իշ. եթէ միայն այս թիւը ապազրական վրիտակ չէ» (Ծ. Պ. ծր. իշ.): Դր. Բելքի ինձ զրածը՝ թէ տեսելէ Ամուսն Ախթամարում շատ հին Խորենացիներ՝ այնքան էլ վատաշելի չէ, քանի որ պարոնը բուրովին անտեղեակ է հայերէնի և ուրիշներից լածը կամ նրանց կարծիքը կարող էր հարդարել հարդարել):

Միակ տարբեր ընթերցուածը տալիս է Սահահնի ձեռադիրը՝ «և տից»: Տէց իրրե բոյսի անուն մի բոլորովին անփաստ և ձրի ենթապութիւն է: Այս իսկ պարագաներից սափուած ես ինձ թոյլ եմ տալիս ենթազրել որ այդ «և զամից»-ը կամ «և տիցը»-ը մի աղջատուած բառ է, և որի նախնականն է «*զամից», որը կարգացուելէ «*զետից» և յետոյ միայն «և տից» կամ «և զամից»:

Զէտր և Գրքի բառերիցն է, Խորենացու մէջ զործածուած. «և ինքն (Բէլ) զիսանոց ազուցեալ երկաթի, նշանաւորօք վերջօք, և տախտակս պղնձիս թիկանց և լանջաց, և պահպանակս բանջն և բազկայց, գոտեորեալ զմէջուն, և յահեկէ հստինն երկայրի և նիզակ անարի (տպ. նիզակն արի) ի ձեռին իւրում աջոյ, և այլն» (Ա, ժա): Մեր հատուածումն էլ շատ յարմարուումէ այդ բառը. «Ճնշայր Սաթենիկ... զարտախուը զամից ի բարձիցն արդաւանայ»: Արտախուը՝ «թէ, ինչպէս տեսանք, վարակի վրայից հագնելու զդեստ կամ զրահէ եր, պէտքէ մներ բարձերի և ետեկ կողմից զիսաերի վրայ, ինչպէս հինեւրոպական զրահի շասսարը»: Իսկ վարակի զիտենք որ, թէ մեր և թէ եւրոպացիների մէջ, այլ և հնումը՝ էր. «ի միջոյ և ի վայր ծածկոյթ երանաց և բարձից» հյկ. բռ.: Մը-

նումեն «խաւարտ» և «խաւարծի» բառերը: Խաւարտը թէ բանջար է նշանակում այդ անկակած է, ունինք (և ես էլ ժողովել եմ) շատ հին ու նոր վկայութիւններ: Բայց «Խաւարտը» նշանակում է և խաղուայտ = ուռառցք, պալար և այն, անս «հին բառ. ձեռուալ»: Եթէ խաւարտը չէ ընդմիջարկութիւն թերեւս ու ու նշանակէ, բայց ի գասի բոլոր ձեռազրերի «հաւասար» բառը իմ կարծիքով ցոյց է տալիս, որ խաւարտը անպայման ընդմիջարկութիւն է, լուսանցքից մասած: Զոյց աղջատուած բառին կից եղած խաւարտէն, իբրև բոյս հասկացուելով, տեղիք է տուել և մոռացուած արտախուը բառը մեխելու մանաւանդ որ այս բառը շատ նման է հընչում «լախուը, նեխուը, զարտա (զարտա վլաւ) և պարսկ. զարտախուար (Լազարդ Արմ. Stud. 53.) բառերին: Զեռազրերով զբաղուողներին յայանի է թէ ինչպէս են զրւում լուսանցքի մեխութիւնները: Դրւումէ մի հաւասարութեան նշան բնազրի բառի վրայ և մի ուրիշը լուսանցքում որին կից կամ որի տակը զրւումէ մեխութիւնը կամ թարգմանութիւնը: Դրազրագարար միենոյն նշանը գործ է ածում» երբ բառը «իսու է և պէտքէ այդ փոխարիննենք լուսանցքի ուղիղ բառով, և կամ երբ մի բառ պահանջն է և պէտքէ լրացնել լուսանցքում զրւուածով: Այստեղից և ահազին շփոթութիւններ ձեռազրերի մէջ: Շատ անզամ մեխութիւնն ընդունւումէ իբրև պակաս բառ և ներմուծումէ բնազրի մէջ: Աինումէ և աւելի վատ: Բնազրի ուղիղ բառը դուրս է ձգուում և փոխարինուումէ լուսանցքազրութեամբ: (Ցէս իմ «Խոր. Պատ. Ուս.» զ. Ա. Բ. Պ.):

Մեր այս դէպքում իմ կարծիքով, լուսանցքազրութիւնը մտել է բնազրի մէջ, մեկնուած բառի կողքին: Բարեբազրաբար ի գասի բոլոր ձեռազրերը պահել են հաւասարութեան նշանի իմաստը «հաւարտ» խաւարտ, մինչեւ Ա գասի ձեռազրերը ըստ սովորականին ուղղակի ներմուծել են, առանց որեւէ յիշատակութեան: Անշուշտ այս ընդմիջարկու-

թիւնները պատաշել են երկու տարբեր ձեռագիրներում որոնցից և այժմեան երկու զրլիաւոր դասի ձեռագրերի օրինակներն են ծաղում: Այս իսկ պատճառով Բ դասի ընթերցուածը եւ ընթերցոյն եմ համարում: իրարեւ ընդմիջարկութեան հետքը պահող ընթերցուած, մինչդեռ Ա դասը անհետացրել է այդ հետքն անդամ:

«Խաւարծի» կամ «Հաւարծի» բառը — լոկ ուղղագրական տարբերութիւն — խաւարտի նման յայտնի բառ է և վկայութիւններ ունի նոյն իսկ Եղ դարից և նշանակում է Հաւարծի թերեւ և՝ խաւառ: (Հյկ. բառ.): Կարծում եմ թէ այս բառը նոյն գեռ չբացարուած, կազմութիւնն ունի, ինչ որ Հաւարծի լուսանցքից մտած բառ է Լուսանց աղջատուած բառը լուսաբանելու համար, ինչպէս որ Հաւարծի վերեւում: Մանաւանդ որ Հին բառդիքը (ցուց. Գէորգ կիթ-սի № 39) Հաւարծի մեկնումէ այսպէս: «խար կամ խաւարծիլ զար իշխուն ասեն», ուստի և հաւանական է որ «Հաւասար խաւարտ, խաւարծի» միասին զրուած էին լուսանցքում իրարեւ մեկնութիւն «զարտախուրի» և յետոյ միայն, բնագրի մէջ մանելիս անջատուեցան:

Այսպիսով ուրեմն կատանանք հետևեալ լուսաբանուած բնագրերը.

«Այլ և տենչայ (ասեն) Ապթենիկ (տիկին) տենչան» զարտախուր [Հաւասար խաւարտ] * զարից [խաւարծի] ի բարձիցն Արդաւանայ:

— Տիկին Ապթենիկը ցանկանալով ցանկանում է Արդաւանի բարձերից՝ զիստերի արտափուրին: Ամասար պարզ է:

Ապթենիկ և Ապթենիկ ձեւերից երեխ հընագոյնն է Ապթենիկ: Իսկ Ուորլենիւ, եթէ միայն բէն յետսամուտ չէ, թերեւ աւելի ևս չին է և այս գեղքում կարծեմ հետքաւոր է: Ժողովրդական արտասանութեամբ մեկնել սարթենիկը իրեւ սարդենիկ, իսկ սարդենիկ = սարդենի, սարդենիներ, ինչպէս որ Վարսենիկ = վարսաւոր, վարդենիկ = վարդենիք վարդենիս: Հ. Բ. աես և Պարիինիկ = վարիսենի:

Այս գեղքում Ապթենիկ կարելի է մեկնել իբրև Laura, արեմտեան բանաստեղծներից այնչափ երգուած Խաւարտն: Յայտնի է որ՝ բայսերի, ծաղիկների, գոհարների անուններ էին մեր կանացից շատերի անունները: Աերջացնենք մեր խօսքը տալով մի բանի տեղեկութիւն խաւարծին ծառ ծառ ծիլի մասին, որ Խորինացին մեկնողները ընդհանրապէս նոյնացնում են խաւարծի բարին հետ, Խաւարծին հանգիպումէ և խործութիւն խաւարծիլ և այլն ձեւերով (Հյկ. բառ.) բայց երբէք խաւարծի և Ակհացու բաւարանի տուած մեկնութիւնը յայտնի է (Հյկ. բառ.): Հին ձեռ բաւարանները մեկնում են: «Քիսուն խոտն է»: Հայկունին իւր ժողովածուի մէջ զրում է (անտիպ). «Խաւարծիլը, որ կարնեցիք իշխուն կըսեն, ընտիր, քաղցր ու թթուաշ կանանչ մէ: որ սարերը կամքի, ձեռն բարձրանալու միջոցին: Երմասից դըքմի տերեւի նման տերեւ կրուսնի, որոց միջից կրարձրանայ ըստ ալաշկերտցոց «որձան»: որ կես կանգուն բարձր և տափակ է: Աերայի կեղելը քաշեն, կշանեն, կուտեն (ոչ կեղել): Դզմի նման թաւուս է: Ծայլը ունի մանր ծաղիկ, Ալաշկերտի խաւարծիլը շատ համեզ է: Հայկունին առաջ է բերում նաև այս հանելուկը.

* Հանելուկ, հանմանելուկ,
* Ծէրն ի ծաղիկ, տակն աւելուկ,
* Թէ հանես՝ ծէրըն ուտես,
* Թէ շհանես: տակըն ուտես
(Խաւարծիլ).

Պէտք է նկատել որ «որձա» բառը գործ է ածում ոչ միայն խաւարծիլի, այլ բոլոր բանջարների ցողունի համար: այս բառին աղջակից է և արդումցիների «որձուա» բառը (=արու բոյս, աղջիկ որ կանացի չէ, այլ նմանում է բնութեամբ կամ վարմունքով այր մարդու, = կոպիտ): Աւելի խաւարծին (եթէ միայն նոյնանիշ է խաւարծիլի և չընդմիջարկութիւն) չէ արգելոք ակնարկութիւն առնանդամի:

ՄԻԱԲԱՆ:



ՄԵՌ ԿՐԻՏԻԿՈՍԸ



Եշո՞վ է արտայատուել մեր հեղիսակի գրական և գիտնական գործունեութիւնը:
Տէսի գրուածները բազմամիւ են և նոյս բովանդակութիւնը հարուստ և բազմատեսակ: Փիլիսոփայ հոգերան և կրիտիկոս, պատմաբան և հրապարակախոս, իւր հայրենակիցների և օտարների հասարակական բարքերն ուսումնասիրող — աչա Տէնը